ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 194-2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 18 » « 04 » 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյան, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Մարինա Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1198. Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր» ծրագրի «11008. Ստեղծագործական կրթամշակութային մանկապատանեկան ծրագրեր և նախագծեր» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պթետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում «ԴասԱրվեստ» կրթամշակութային ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2,

1.1.3. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 3:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների

շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային

հաշվետվությունը ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. միջոցառման իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառման իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառմանն աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է 15000.0 հազար (տասնհինգ միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ համաձայն Հավելված N 3-ի, իսկ 20%-ը սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. հոկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 5-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Արամի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654	Հ/Հ 900018001421
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ 02506317
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Հ. Հակոբյան	---------- Մ. Հակոբյան
Կ.Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
« 18 » «04 » 2024 թ.
N ՄՇԴ - 194 -2024 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«ԴասԱրվեստ» կրթամշակութային

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Արամի 1
3	Ծրագրի անվանում	«ԴասԱրվեստ» կրթամշակութային ծրագիր
3.1	Բովանդակություն	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Ծրագիրը աշակերտներին բացառիկ հնարա-վորություն կտա ծանոթանալու Հայաստանի ազգային պատկերա-սրահին՝ որպես թանգարան, վերջինիս գործունեությանը, կառուցվածքին, թանգարանային առարկա հասկացությանը, անվտանգության ու պահպանման հատուկ կանոններին, ինչպես նաև թանգարանի կարևորագույն բաղկացուցիչ հանդիսացող ֆոնդապահոցներում պահվող լավագույն ցուցանմուշներին: Ծրագրում ընդգրկված են 3-13-րդ դարերի հայկական մոնումենտալ արվեստի օրինակներ, 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի հայկական կերպարվեստի առանցքային հեղինակների ստեղծա-գործություններ: Նախատեսված են մի քանի թեմատիկ ծրագրեր տարբեր տարիքային խմբերի համար (յուրաքանչյուր խմբում առավելագույնը 30 աշակերտ) մատչելի լեզվով ու համապատասխան գործիքակազմով. **Կրտսեր խումբ (1-5 դասարաններ)** • «Գույների աշխարհում» (կներկայացվեն Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Մինաս Ավետիսյանի, Հարություն Կալենցի, Հակոբ Հակոբյանի գունեղ ստեղծագործությունները), «Մոնումենտալ արվեստ» (կներկայացվեն 3-13-րդ դարերի հայկական մոնումենտալ արվեստի օրինակները՝ Գառնու բաղնիքի հատակի խճանկարը, Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցու որմնանկարները: **Միջին խումբ (5-9 դասարաններ)** • «Ազգային էպոս» (կներկայացվեն Հակոբ Կոջոյանի և Երվանդ Քոչարի «Սասնա Ծռեր» էպոսին նվիրված ստեղծա-գործությունները), • «Իմ Կոմիտասը» (կներկայացվեն Փանոս Թերլեմեզյանի, Եղիշե Թադևոսյանի, Հենրիկ Սիրավյանի, Սարգիս Մուրադյանի և հայ անվանի նկարիչների Կոմիտասին ներկայացնող ստեղծա-գործությունները): **Ավագ խումբ (9-12 դասարաններ)** • «Բեմանկարչության արվեստը» (կներկայացվեն Մինաս

		Ավետիս-յանի «Գայանե» բալետի, Մարտիրոս Սարյանի «Ալմաստ» օպերայի բեմական ձևավորումները և Միքայել Արուտչյանի «Քաջ Նազարը» ներկայցման հագուստի էսքիզները), • «Գեղանկար տարածության մեջ» (կներկայացվեն տարածական գեղանկարի հիմնադիր, 20-րդ հայ անվանի արվեստագետ Երվանդ Քոչարի ստեղծագործությունները):
3.2	Նպատակ	Արվեստի և թանգարանային գործունեության ապակենտրոնացման միջոցով նպաստել թանգարանների և կրթական հաստատությունների կապերի ամրապնդմանը, կրթական ծրագրերում հայկական և համաշխարհային արվեստի դասավանդման առավել գործուն, արդյունավետ մեթոդների կիրառմանը, թանգարանային ցուցա-դրությունների կազմակերպման հետաքրքիր գործընթացում անուղղակի ներգրավմանը: Շրջիկ ցուցադրությունների ֆորմատը կնպաստի մարզային դպրոցների առավել մեծ թվով աշակերտների ներգրավմանն ու մշակութային ժառանգության արժևորմանը:
3.3	Անցկացման ժամկետ	18.04.2024-30.09.2024
3.4	Անցկացման վայր	**Արմավիրի մարզ** • ք. Արմավիր • գ. Ջանֆիդա **Արարատի մարզ** • գ. Գետազատ • ք. Դվին **Տավուշի մարզ** • գ. Հաղարծին • գ. Աչաջուր **Լոռու մարզ** • գ. Գյուլագարակ • գ. Ամրակից • գ. Արդվի • գ. Օձուն **Արագածոտնի մարզ** • գ. Ծիլքար • ք. Ապարան **Վայոց ձորի մարզ** • գ. Ելփին • գ. Արենի **Սյունիքի մարզ** • գ. Հալիձոր • ք. Գորիս • գ. Վաղատին **Կոտայքի մարզ** • գ. Նուռնուս • գ. Բջնի **Գեղարքունիքի մարզ**

		• գ. Լճաշեն • գ. Նորատուս **Արագածոտնի մարզ** • գ. Դաշտադեմ **Շիրակի մարզ** • ք. Արթիկ • գ. Մարմաշեն • գ. Անիպեմզա • ք. Գյումրի
3.5	Ակնկալվող արդյունքներ	«ԴասԱրվեստ» ծրագրի շրջանակներում կազմակերպված թեմատիկ ցուցադրությունների, կրթական ծրագրերի և դասախոսությունների միջոցով աշակերտները կճանաչեն հայկական կերպարվեստի խոշորագույն ներկայացուցիչներին, կտիրապետեն կերպարվեստին վերաբերող տարրական գիտելիքներին (այն է՝ կերպարվեստի տեխնիկաներ, գրաֆիկայի տեխնիկաներ, նյութ և այլն), կծանոթանան թանգարանագետի և արվեստաբանի մասնագիտություններին: Ծրագիրը մեծապես կնպաստի արվեստի ու թանգարանային գործունեության ապակենտրոնացմանն ու կրթական հաստատությունների ու թանգարան-ների միջև կապի ամրապնդմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	**Իրականացման վայրը՝** ՀՀ մարզերի քանակ -10, Բնակավայրերի քանակ-26, **Մասնակիցներ՝** Աշակերտներ-1000 Ներգրավված մասնագիտական անձնակազմ-6:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային
պատկերասրահ» ՊՈԱԿ
ք. Երևան, Արամի 1
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001421
ՀՎՀՀ 02506317

Տնօրեն՝

Տնօրեն՝

---------- Մ. Հակոբյան

Կ. Տ.

Հավելված N 2
« 18 » «04 » 2024 թ.
N ՄՇԴ-194-2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ԴասԱրվեստ» կրթամշակութային ծրագրի ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը	Գումարը (հազար դրամ)
1	**Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում**				**7370.9**
	լուսատեսանկարահանում (16 օր, ներառյալ ծրագրի վերաբերյալ ամփոփ տեսանյութի պատրաստումը՝ մոտ. 40 րոպե)	հատ	1	2000.0	2000.0
	տպագրվող ռոլափի, պիտակների, աֆիշների դիզայն և սոցիալական ցանցում միջոցառումների վիզուալների պատրաստում (10 մարզ այցելելու համար)	հատ	1	210.0	210.0
	թանգարանային առարկաների ապահովագրություն (5 առարկա)	հատ	1	1000.0	1000.0
	թանգարանային առարկաների փաթեթավորում և արկղավորում՝ ներառյալ արկղերի պատրաստումը (36 առարկա, 7 արկղ)	հատ	1	1000.0	1000.0
	նվերների փաթեթավորում (1000 նվեր)	հատ	1	300.0	300.0
	նկարակալ (փայտե)	հատ	12	25.0	300.0
	ենթաշրջանակով վերատպություն (Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի ստեղծագործություններից, մասնակիցներին նվիրելու համար)	հատ	1000	1.0	1000.0
	պլաստմասե շրջանակ ((80սմx59.5սմ)՝ 1 հատ, (54սմx74սմ)՝ 33 հատ)՝ միջինացված հաշվարկով				530.4
	նյութեր (գունավոր մատիտ՝ 50 տուփ, սև մատիտ՝ 50 հատ, ռետին՝ 10 հատ, սրիչ՝ 20 հատ, յուղամատիտ՝ 100 հատ, կպչուն ժապավեն թղթյա՝ 14 հատ, կպչուն ժապավեն երկկողմանի՝ 10 հատ, թղթադիր՝ պլանշետ-տախտակ՝ 20 հատ, խոնավ անձեռոցիկ՝ 50 հատ, թուղթ A4 (160 գ/քմ)՝ 12 տուփ, գորգիկ՝ 30 հատ, ստվարաթուղթ՝ 30 հատ, մանր ավազաքար՝ 25 կգ., գունավոր թուղթ՝ 15 տուփ, մկրատ՝ 20 հատ, մարկեր՝ 30 հատ, ծեփամածիկ՝ 40 տուփ, ափսե՝ 6 հատ)՝ կրթական ծրագրի իրականացման համար՝ 1000 աշակերտի հաշվարկով				655.5
	հենարանով X բաններ (200սմx120սմ)	հատ	3	21.0	63.0
	պաստառի տպագրություն (X բաններին ամրացվող կտավի տպագրություն)՝ 10 ք/մ	ք/մ	10.0	9.6	96.0
	բացիկ	հատ	1000	0.2	200.0
	պիտակներ (պվք՝ 11սմx13սմ)	հատ	36	0.28	10.1
	անոտացիա (բացատրող տեքստերի տպագրություն)	ք/մ	0.62	9.5	5.9
2	**Կեցության ծախսեր**				**1549.2**
	օրապահիկ (Արմավիր, Ջանֆիդա՝ 1 օր, Գետազատ, Դվին՝ 1 օր,Նուռնուս, Բջնի՝ 1 օր, Հաղարծին, Աչաջուր՝ 1 օր, Գյուլագարակ, Ամրակից՝ 1 օր, Օձուն, Արդվի՝ 1 օր, Թիլքար, Ապարան՝ 1 օր, Ելփին, Արենի՝ 1 օր, Հալիձոր՝ 1 օր, Գորիս՝ 1 օր, Վաղատին՝ 1 օր, Լճաշեն. Նորատուս՝ 1 օր, Դաշտադեմ, Արթիկ՝ 1 օր, Մարմաշեն՝ 1 օր, Անիպեմզա՝ 1 օր, Գյումրի՝ 1 օր)՝ 6 մարդ x 16 օր	մարդ/օր	96	5.0	480.0
	գիշերավարձ (Ստեփանավան՝ 3 գիշ., Գորիս՝ 3 գիշ., Գյումրի՝ 3 գիշ.)՝ 6 մարդ x 9 օր (միջին գնով)	մարդ/օր	54	19.8	1069.2

3	**Տրանսպորտային ծառայություններ** (Երևան, Արմավիր, Ջանֆիդա, Գետազատ, Դվին, Հաղարծին, Աչաջուր, Գյուլագարակ, Ամրակից, Օձուն, Արդվի, Ծիլքար, Ապարան, Ելփին, Արենի, Հալիձոր, Գորիս, Վաղատին, Նուռնուս, Բջնի, Լճաշեն. Նորատուս, Դաշտադեմ, Արթիկ, Մարմաշեն, Անիպեմզա, Գյումրի, Երևան))				**3579.9**
	միկրոավտոբուս (անձնակազմի փոխադրում)	հատ	1	1043.1	1043.1
	բեռնատար (թանգարանային առարկաների տեղափոխում)	հատ	1	2536.8	2536.8
	ԸՆԴԱՄԵՆԸ				**12500.0**
	ԱԱՀ*				**2500.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**15000.0**
	* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ
ք. Երևան, Արամի 1
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001421
ՀՎՀՀ 02506317
Տնօրեն՝
_____ Մ. Հակոբյան
Կ. Տ.

Հավելված N 3
« 18 » « 04 » 2024թ.
N ՄՇԴ- 194 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Միջոցառումների և աշխատանքների անվանումը	Պայմանագրի գումար (հազ դրամ)	Ընդամենը 80% (հազ դրամ)	այդ թվում, հատկացվող գումարը՝ ըստ եռամսյակների	
				2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	2024 թվականին «ԴասԱրվեստ» կրթամշակութային ծրագրի իրականացում	15000.0	**12,000.0**	6000.0	6000.0
	Ընդամենը	**15,000.0**	**12,000.0**	6,000.0	6,000.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային
պատկերասրահ» ՊՈԱԿ
ք. Երևան, Արամի 1
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական
վարչություն
Հ/Հ 900018001421
ՀՎՀՀ 02506317
Տնօրեն՝
---------- Մ. Հակոբյան
Կ. Տ.

Հավելված N 4
« 13 » « 04 » 2024 թ.
N ՄՇԴ - 154 - 2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Հավելված N 5
« 18 » « 04 » 2024 թ.
N ՄՇԴ - 194 2024 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011046654
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան « » « » 2024

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը՝ N ՄՇԴ « » « » 2024 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____-ի *(անուն, ազգանուն)* և կազմակերպությունը, ի դեմս « նախագահ _____-ի *(անուն, ազգանուն)*, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2024 թ. եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2024 թ. N « » եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակում իրականացրել է միջոցառումը, իսկ պետական մարմինը վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

Կ. Տ.